Հավելված N 425
էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հուլիսի 26 -ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) առևտրի և ինտեգրացիայի վարչության (այսուհետ՝ Վարչություն) առևտրի կարգավորումների բաժնի գլխավոր մասնագետ (այսուհետ՝ Բաժնի գլխավոր մասնագետ) (ծածկագիրը՝ 23-32.11-Մ2-8)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը կամ Բաժնի ավագ մասնագետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիր

Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իրականացնում է Հայաստանի համար թիրախային շուկաներում գործող ներմուծման ընթացակարգերի հուշաթերթիկների մշակման և տեղեկատվական հասանելիության հետ կապված աշխատանքները,
2. իրականացնում է առևտրի քաղաքականության մշակման և դիտանցման հետ կապված աշխատանքները,
3. իրականացնում է երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների ռեեստրի վարման, ինչպես նաև նշված խոչընդոտների վերացման ուղղությամբ ճանապարհային քարտեզի ձևավորման աշխատանքները՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում,
4. իրականացնում է պետական և մունիցիպալ գնումների մասով ազգային ռեեստրի վարման աշխատանքները՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում,
5. իրականացնում է Հայաստանի համար արտոնյալ կամ բարենպաստ առևտրային ռեժիմ ունեցող շուկաների մուտքի առկա խոչընդոտների վերացման, մուտքի հնարավորությունների ընդլայնման և հայրենական ապրանքները արտերկրի

հեռանկարային շուկաներում ներկայացնելու միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքները,

6. իրականացնում է Արտոնությունների ընդհանրացված համակարգի կիրառման հետ կապված միջոցառումները՝ առևտրատնտեսական համագործակցության ընդլայնման շրջանակներում,
7. իրականացնում է թվային առևտրի ներդրման և իրականացման հետ կապված աշխատանքները՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում,
8. իրականացնում է էլեկտրոնային առևտրի կիրառման վերաբերյալ համապատասխան իրավական ակտերի մշակման և դրանցից բխող միջոցառումների իրականացման հետ կապված աշխատանքները:

Իրավունքները՝

- ստանալ շահագրգիռ մարմիններից Հայաստանի համար թիրախային շուկաներում գործող ներմուծման ընթացակարգերի հուշաթերթիկների մշակման և տեղեկատվական հասանելիության աշխատանքների հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն,
- ստանալ շահագրգիռ մարմիններից ու կազմակերպություններից առևտրատնտեսական համագործակցության ընդլայնմանն ուղղված Արտոնությունների ընդհանրացված համակարգի կիրառման միջոցառումների, ՀՀ տնտեսական զարգացման խնդիրներով պայմանավորված՝ առևտրի քաղաքականության մշակման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն,
- մասնակցել երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների խոչընդոտների վերացման ուղղությամբ ճանապարհային քարտեզի ձևավորման հետ կապված շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների հետ աշխատանքային քննարկումներին,
- մասնակցել էլեկտրոնային առևտրի կիրառման վերաբերյալ համապատասխան իրավական ակտերի մշակման և դրանցից բխող միջոցառումների իրականացման հետ կապված Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների և շահագրգիռ մարմինների հետ աշխատանքային քննարկումներին:

Պարտականությունները՝

- ներկայացնել առաջարկություններ շահագրգիռ մարմիններից ստացված հիմնավորումների, կարծիքների և տեղեկատվության հիման վրա Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության աշխատանքների իրականացման վերաբերյալ,
- կատարել վերլուծություններ ապրանքների արտադրության, ներմուծման և արտահանման ծավալների մասով,
- կատարել ուսումնասիրություններ և վերլուծություններ առևտրային քաղաքականության մշակման և իրականացման վերաբերյալ, կազմել

տեղեկանքներ, հաշվետվություններ,

- ստուգել և վերլուծել ազատ առևտրի մասին համաձայնագրերի, ինչպես նաև ԵԱՏՄ անդամակցության պայմանագրից բխող պարտավորությունների շրջանակներում համապատասխան շուկաները՝ հայրենական ապրանքների մրցունակության և ներկայացվածության ապահովման հետ կապված,
- ներկայացնել առաջարկություններ երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների վերացման ուղղությամբ ճանապարհային քարտեզի ձևավորման աշխատանքներին մասնագետներ և փորձագետներ ներգրավելու վերաբերյալ՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում,
- ներկայացնել առաջարկություններ՝ արտաքին շուկաների ուսումնասիրման և տեղական արտադրողների համար արտաքին շուկաների հասանելիության, ինչպես նաև արտահանման խթանման վերաբերյալ,
- ուսումնասիրել ներքին շուկայի գործառնության շրջանակներում փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների, սահմանափակումների և արգելքների բացահայտման և վերացման հետ կապված միջոցառումները, մասնակցել երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների ռեեստրի վարման աշխատանքներին,
- մշակել և կազմել առևտրատնտեսական համագործակցության ընդլայնմանն ուղղված Արտոնությունների ընդհանրացված համակարգի կիրառման հետ կապված միջոցառումները:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Ժամանակի կառավարում
2. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
3. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: